

3911

151.7

7-28

6091 387
2001.02.02

1915 № 698

14 JUL 2009

ՄԱՆԿԱՆ ԿԵԱՆՔԸ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЭТНОГРАФИИ
АКАДЕМИИ НАУК
СССР

Գրքի Կ 7 կողմ

Ռուսերէնից թարգմանեց

ՅՈՎԱԿ. ՍՏԵՓՈՆԵԱՆՑ

Շ ու չ ի

Լարան Բ. Տէր-Սահակեանի

1914



arm 151.7
6091 7-28

ՉԱՐԼԸՋ ԴԱՐԻՒՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՄԱՆԿԱՆ ԿԵԱՆՔԸ



Գին 5 1 կոպ.

Ռուսերէնից թարգմանեց

ՅՈՎԱԿ. ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

Շ ա լ ի
Տպարան Բ. Տէր-Սահակեանի
1914



ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Իսլովիտ Տէնի չափազանց հետաքրքիր յօդւածը, գրւած մանկան հոգու զարգացման մասին, ինձ առիթ տւեց նորից աչքի անցկացնելու յուշատետրս, որտեղ արձանագրւած էին այն բոլոր փաստերը, որ ես գիտել էի դրանից 37 տարի առաջ՝ իմ երեխաներից մէկի վերաբերմամբ: Պիտի ասեմ, որ ես այդ ժամանակ ճիշտ գիտողութիւններ անելու նպաստաւոր պայմաններում եմ գրտնրւել և գրի եմ առել այն բոլորը, ինչ որ տեսել ու նկատել եմ: Զգացմունքների արտայայտութիւններն են եղել այդ ժամանակաւ իմ գիտողութիւնների գլխաւոր առարկան և ես յատկապէս այդ խնդրի առթիւ մի գիրք եմ գրել: Բայց քանի որ ես ուշադրութեան եմ արժանացրել և ուրիշ կողմեր, ուստի կարծում եմ, որ մանկան վերաբերմամբ արած իմ գիտողութիւնները կարող են որոշ հետաքրքրութիւն ներկայացնել, — միանալով Տէնի և ուրիշների աշխատութիւններին, որ անշուշտ դեռ պիտի կատարւեն ապագայում:

Ուշադրութեան առնելով իմ փորձերն ու գիտողութիւնները, որ կատարել եմ հարազատ



60698-67



երեխաներիս վրայ, ես վստահ կերպով կարող եմ յայտնել, որ տարբեր երեխաների ընդունակութիւնների զարգացման շրջանները բաւականին զանազանուում են իրարից:

Իմ նորածին մանուկը հէնց առաջին շաբթում շատ լաւ կատարում էր անգիտակից, ինքնաբերաբար շարժումներ. նա փռշտում էր, ձգւտում, յօրանջում, «ճըմկոտում», նմանապէս ծծում և ճչում: Եօթներորդ օրը մանկան մերկ ոտի կրնկին դիպցրի թղթի մի կտոր. նա դէն հրեց այդ և սեղմեց մատները, ինչպէս վարւում է աւելի չափահաս երեխան, երբ նրան խուտուտ են ածում: Այդ անգիտակից շարժումների զարգացած լինելը ցոյց է տալիս, որ գիտակից շարժումների շատ անդարգացած վիճակը մանկան մէջ պիտի բացատրել ոչ թէ մկանուներէրի կամ համակարգւող կենտրոնների կազմութեամբ, այլ կամքի ոյժի բացակայութեամբ: Չնայած իմ մանկան չափազանց վաղ հասակին, ինչ ախպէս էր թւում, թէ երբ տաքուկ ու քնքուշիկ ձեռքով շոյում էի նրա երեսը՝ նա ծծելու ցանկութիւն էր ցոյց տալիս: Դա պիտի համարել բնազդական գործողութիւն, որովհետեւ մանուկը չէր կարող այդ համեմատել մայրական կրծքի շփման հետ և առհասարակ դեռ փորձառութիւնից միանգամայն զուրկ էր: Առաջին երկու շաբաթը մանուկս յաճախ էր վախ զգում, մանաւանդ երբ լսում էր

յանկարծակի աղմուկ. այդպիսի դէպքերում նա արագ—արագ թարթում էր աչքերը: Մի և նոյնն ես շատ անգամ եմ նկատել առաջին երկու շաբթւայ ընթացքում և իմ միւս երեխաների վերաբերմամբ: Մի անգամ, երբ նա արդէն 66 օրական էր, ես պատահաբար փռշտացի. դրանից նա սաստիկ ցնցւեց, ճակատը կնճռեց և ըստ երևոյթին վախեցաւ, որովհետեւ սկսեց ուժեղ ճչալ. չնայած որ այդ դէպքից մի ժամ անցել էր, այնուամենայնիւ նա դեռ գտնւում էր լարւած ու կարծես ջղային դրութեան մէջ. ամենաթեթեւ աղմուկը նրան երկիւղ էր պատճառում: Այդ դէպքից մի քանի օր առաջ նա վախեցել էր, յանկարծ տեսնելով մի ինչ-որ նոր անծանօթ առարկայ. դրանից շատ ժամանակ անցնելուց յետոյ՝ ամեն մի աղմուկ ևս առաւել մեծ երկիւղ էր պատճառում նրան, քան թէ նոր առարկաների տեսքը: Օրինակ, երբ մանուկը 114 օրական էր, ես նրա երեսի առջև ցնցեցի կօնֆետիկներով լցւած տուփը և նա վախեցաւ. իսկ երբ դատարկ տուփը կամ թէ մի որ և իցէ նոր ուրիշ առարկայ աւելի էի մօտեցնում նրա գէմքին՝ նա հանգիստ էր մնում և ոչ վախենում էր, ոչ էլ աչքերը ճպճպում, ինչպէս կօնֆետները շխշխկալներու դէպքում: Դրանից մենք կարող ենք այն եզրակացնել, որ նախ և առաջ աչքերը թարթելով մանուկը պաշտպանւում է անծանօթ առարկաներից և որ այդ երևոյթը դարձեալ փոք-

ձի հետեանք չէ, այլ մի ինքնաբերաբար շարժողութիւն է: Մանուկն առհասարակ զգայուն է դէպի ձայնը. այնուամենայնիւ իմ 124 օրական զաւակը դեռ չէր կարողանում ճիշտ իմանալ, թէ որտեղից է լսում ձայնը և հետեալէս դէպ՝ այն կողմը չէր ուղղում իր աչքերը: Ինչ վերաբերում է տեսողութեանը, պէտք է ասեմ, որ նա արդէն իններորդ օրը աչքերը դարձնում էր դէպի այլուող մօմը: Մինչև 45-րդ օրը թուում էր, թէ ուրիշ ոչ մի բան չէ գրաւում նրա ուշադրութիւնը. բայց 49-րդ օրը նրան շատ հետաքրքրեց վարագործի վառ ներկած փունջը. նա հայեացքը բեռնեց դրա վրա և մնաց անշարժ դրութեան մէջ: Զարմանալի դանդաղութեամբ էր զարգանում նրա մէջ՝ շարժող առարկաներին աչքերով հետեւելու ընդունակութիւնը: Այդ նրան հեշտութեամբ չէր յաջողում նոյն իսկ այն ժամանակ, երբ նա արդէն եօթ և կէս ամսական էր: Երեսուն և երկու օրականում նա նկատեց իւր մօր կուրծքը՝ երեք թէ չորս բթաչափ հեռաւորութեան վրայ. այդ պարզ երևաց նրանից, երբ նա շրթունքները բաց արաւ և հայեացքը դարձրեց դէպի մօր կուրծքը. թէպէտ մինչև այդ երևոյթը կատարւելը նա դեռ չէր շօշափել մայրական կուրծքը, բայց և այնպէս ես յանձն չեմ առնում վերջնական բացատրութիւն տալ, քանի որ ինձ համար չպարզեց, թէ արդեօք այդ շարժողութիւնը պայմանաւորւած էր տեսողութեամբ,

հոտառութեամբ, թէ տաքի զգացումով կամ հէնց ուղղակի այն դրութեամբ, որի մէջ գտնւում էր մանուկը:

Ձեռների ու ոտների, ինչպէս և իրանի շարժողութիւնները դեռ երկար ժամանակ կատարւում էին անորոշ, աննպատակ կերպով և առհասարակ կրկնողաբար. սակայն միակ բացառութիւնն էր կազմում այն, որ նա շատ վաղ, տակաւին 40 օրականում, կարողանում էր ձեռները տանել դէպի բերանը: Եօթանասուն և եօթ օրականում նա աջ ձեռքով բռնեց ծծուկը, որով նրան կերակրում էին, և չկամեցաւ վերցնել ձախ ձեռքով, թէպէտ ես աշխատում էի խցկել այդ ձեռքի մէջ. դրանից մի շաբաթ յետոյ նա սկսեց ծծուկը (ծծրա) վերցնել և ձախ ձեռքով, այնպէս որ աջ ձեռքը մի շաբթով առաջ էր հմտացել ձախից: Եւ այնուամենայնիւ այդ մանուկը վերջ ի վերջոյ դարձաւ ձախիկ՝ անկասկած շնորհիւ ժառանգած սովորութեան, քանի որ նրա պապը, մայրը և մի եղբայրը ևս ձախիկ էին եղել: Ութսուն և ինսուն օրականի միջև նա բերանն էր տանում ամեն տեսակի իրեր. դրանից երկու թէ երեք շաբաթ անցած նա կարողանում էր արդէն այդ գործողութիւնը կատարել բաւականին ճարպիկ կերպով. շատ անգամ նախ և առաջ քթով տնտղում էր իրը, ապա միայն տանում բերանը: Երբ նա մատս բռնում էր և

քաշուամ իր բերանը՝ ծծելու դիտաւորութեամբ, նրան արգելք էր հանդիսանում իր սեփական ձեռքը. բայց 114 օրականում նա այնպէս վարժ էր ղեկավարում իր ձեռքի շարժումները, որ կարողանում էր ուղղակի բերանը տանել մատիս ծայրը: Այդ գործողութիւնը նա շատ յաճախ էր կրկնում. ակնյայտնի երևում էր, որ դա պատահական չէր, այլ մտածած: Զեռների դիտակցական շարժողութիւններն էլ զգալի չափով առաջ անցան իրանի և ոտների շարժումներից, թէպէտ վերջիններս արդէն վաղուց էին դարձել յաջորդական, ինչպէս օրինակ ման գալը: Զորս ամսականում նա յաճախ ուշադրութեամբ նայում էր իր սեփական ձեռներին և մօտը գտնուող իրերին, չուում էր աչքերը, որոնք այդ պատճառով երբեմն շլում էին: Երբ նա 132 օրական էր, ես նկատեցի որ եթէ մի ո՛ր և է առարկայ ենք մօտեցնում նրա դէմքին, այն ժամանակ նա փորձում է բռնել, բայց այդ նրան շատ անգամ չի յաջողում. աւելի հեռու գտնուող իրերի վերաբերմամբ նա այդպիսի փորձ չէր կատարում: Աերոյիշեալ շարժողութիւններն անշուշտ տեսողութեան հետեանք են. երբ մանկան աչքերը պարզ նկատում էին, նա լարում էր իր տեսողութիւնը, ապա ձեռները շարժում էր՝ տեսած իրը բռնելու համար: Թէպէտ այդ երեխան, ինչպէս տեսանք, շատ վաղ սկսեց օգտուել իր ձեռներով, բայց ապագայում

այդ կողմից առանձին մի ընդունակութիւն ցոյց չը տւեց. նա երկու տարեկան և չորս ամսական հասակում բռնում էր քարեգրիչը, գրիչը և այլ առարկաներ ոչ աւելի հմտօրէն, քան նրա քոյրը, որ այդ ժամանակ միայն տասը և չորս ամսական էր և զանազան իրերից նպատակայարմար կերպով օգտուելու բնական մեծ հակումն էր ցոյց տալիս: Դժար է որոշել, թէ առաջին անգամ նա երբ արտայայտեց *բարկութեան զգացմունքը*: Ութերորդ օրը մանկան ճակատն արդէն կնճուռում էր և ամեն անգամ լաց լինելուց առաջ երեսի մաշկը ծալքերով կիտում էր նրա աչքերի շուրջը. բայց այդ երևոյթը կարելի է վերագրել նրա զգացած ցաւին, այլ ոչ յուզմունքին կամ բարկութեանը: Տասը շաբթական դարձած ժամանակ, մի անգամ սովորականին հակառակ, նրան խմբցրել էին պաղ կաթ և քանի դեռ նա կաթը ծծելիս է եղել՝ ճակատը կնճուռել է. որքան տեղեկացայ, այդ ժամանակ նրա դէմքը լուրջ է եղել, ինչպէս հասակաւոր մարդունը, իսկ այդ անտրամադրութեան նըշան է, որովհետեւ նրան ստիպել էին կատարել մի անսովոր բան: Երբ նա արդէն մօտաւորապէս չորս ամսական էր, գուցէ և դեռ աւելի փոքր, այլ ևս չէր կարելի կասկածել, որ նա աստիկ բարկանալ գիտէ. այդպիսի դէպքերում արիւնն երեսին էր խփում և առհասարակ գլխի ողջ մաշկը կարմրում էր: Բաւական էր ամենաչնչին մի

առիթ, որ նա բարկանար. այդպէս օրինակ՝ եօթ
ամսականում նա սաստիկ զայրացաւ այն պատճա-
ռով, որ կիտրոնը (լիմոնը) վայր էր գցել և չէր կարո-
ղանում ձեռքերով վերցնել: Տասը և մէկ ամսակա-
նում նա դէն գցեց իրեն դուր չ'եկող խաղալիքը և
նախ քան դէն ձգելը՝ խփեց խաղալիքին. ես են-
թադրում եմ, որ այդ հարւածը գրգռման բնադ-
դական նշանն էր, որ լիշեցնում է նոր ձևից
դուրս եկող կոկորդիլոսի ճուտիկի չրըխկոցը: Խը-
փելով խաղալիքին, պարզ է որ մանուկը բնաւ
դիտաւորութիւն չունէր նրան ցաւ պատճառելու:
Երկու տարեկան և երեք ամսական հասակում
նա շատ յաճախ էր շպրտում՝ գրքեր, ձողեր և
ուրիշ առարկաներ նրանց վրայ, ովքեր նրան ան-
բաւականութիւն էին պատճառում: Իմ միւս որ-
դիններից մի քանիսն էլ են այդպէս վարւել: Այդ-
պիսի վարմունքի թեթեւ հետքն անգամ չեմ նկա-
տել իմ փոքրիկ աղջիկներին վերաբերմամբ, ուս-
տի կարծում եմ, որ շարտելու կամ հրելու հա-
կումը տղաների ժառանգական յատկութիւնն է:
Ամենայն հաւանականութեամբ կարելի է ասել,
որ վախը մանուկների մէջ զարգացող առաջին
զգացմունքներից մէկն է, քանի որ նրանք վախե-
նում են յանկարծակի աղմուկից և ճշում են մին-
չև անգամ առաջին շաբաթներում: Իմ մանուկը
չորս և կէս ամսական էր, երբ ես նրա ներկայու-
թեամբ ամեն տեսակի տարօրինակ և ուժեղ աղ-

մուկ էի բարձրացնում, որ և նրան միշտ զւար-
ճութիւն էր պատճառում. մի անգամ էլ ես
խիստ ուժգին ձայն հանեցի, որպիսին նա դեռ
երբէք չէր լսել. մանուկս իսկոյն լուրջ կերպա-
րանք առաւ և սկսեց լաց լինել: Երկու թէ երեք
օր այդ դէպքից անցած ես պատահաբար կրկին
այդպիսի ձայն հանեցի և էլի ստացեց նոյն հե-
տեանքը: Մօտաւորապէս այդ ժամանակամիջոցում,
այսինքը 137-րդ օրը, ես մէջքս դարձրի դէպի
մանուկը և մի քիչ անց ու դարձ անելուց յետոյ
կանգնեցի այդպիսի դիրք ստացած. նա իսկոյն և
եթ շատ լուրջ և վախեցած արտայայտութիւն ցոյց
տւեց դէմքի վրայ և ամենայն հաւանականութեամբ
կսկսէր լաց լինել, եթէ որ երեսու չըրջէի ուղիղ
դէպի նրա կողմը: Այդ ժամանակ նրա դէմքը
մէկէն զւարթացաւ և նա մինչև անգամ ժպտալ
սկսեց: Ամենքս գիտենք, որ նոյն իսկ չափահաս
երեխաներն էլ են վախենում ամեն մի խաւար,
մութ և անյայտ բանից: Իբրև օրինակ կարող եմ
առաջ բերել հետեւեալը: Մի անգամ հէնց նոյն
մանկանը, որ այդ ժամանակ $2\frac{1}{4}$ տարեկան էր,
տարայ կենդանաբանական այգին, ուր նա գոհու-
թեամբ էր նայում այն բոլոր կենդանիներին,
որոնք նմանում էին նրանց, որոնց նա արդէն
ճանաչում էր. այդպէս օրինակ նա ուրախու-
թեամբ էր նայում եղջերուին, քարայծին և բո-
լոր թռչուններին, մինչև անգամ ջալամներին.

բայց մանուկս շատ վախեցաւ վանդակների մէջ գտնուող խոշոր կենդանիներից։ Յետոյ նա շատ անգամ էր օկնարկում, թէ ուրախութեամբ կըրկին կըգնար նոյն այգին, բայց չէր ցանկանալ տեսնել միայն «տների միջի գազաններին»։ Ես չկարողացայ ինձ պարզ հաշիւ տալ երեխայի զգացած այդ երկիւղի առթիւ։ Իրաւունք չունէի՝ արդեօք ենթադրելու, որ երեխաների անորոշ, բայց միանգամայն իրական երկիւղն առաջ է գալիս՝ վաղեմի վայրենաբարոյ ժամանակների տխմար նախապաշարմունքների և մարդկութեան կրած վրտանգների շնորհիւ։ Վախի այդ զգացումը ժառանգաբար երեւան է գալիս միանգամայն անկախ փորձից։ Ոչ թէ միայն վախը, այլ և բնաւորութեան դրական ու բացասական յատկութիւնները ևս ժառանգաբար անցնում են սերնդից — սերունդ։ Նախահայրերի կրած վախի զգացումն երեւան է գալիս մանկան կեանքի առաջին շրջանում, որ ապա հետզհետէ չքանում է։

Ինչ վերաբերում է հաճելի զգացումներին, պէտք է ասել, որ երեխաները մեծ հաճոյք են զգում ծծելու գործողութիւնից. այդ մասին վրկայում է նրանց շարժուն աչքերի ուրախ արտայայտութիւնը։ Իմ մանուկը ժպտալ սկսեց քառասուն և հինգ օրականում, իսկ միւսը քառասուն և վեցում. ժպտալով նա պարզ կերպով ցոյց էր տալիս հաճոյքի զգացում, քանի որ աչքերը

փայլում և կոպերը մեղմօրէն կուչ էին դալիս։ Այդպիսի ժպիտ մանուկս գլխաւորապէս այն ժամանակ էր արտայայտում, երբ իր մօրն էր տեսնում. այդ պատճառով հաւանական է ենթադրել, որ այդ երեւոյթը հոգեւոր ծագումն ունի. այն էլ պիտի ասել, որ մանուկը, ինչպէս այդ ժամանակներում, այնպէս և յետագայում՝ ժպտում էր նաև մի ինչ-որ ներքին հաճելի զգացմունքից դրդւած, երբ գոյութիւն չունէր մի այնպիսի բան, որ կարողանար նրան զրգուել կամ ուրախացնել։ Հարկը և տասն օրականում նա շատ զւարճացաւ, երբ երեսին գոգնոց կապեցին և յանկարծ յետ վերցրին. պակաս չափով չը զւարճացաւ նաև այն ժամանակ, երբ ես մի անգամ յանկարծակի բաց արի փակած երեսս և նրա դէմքին մօտեցրի. այդ ժամանակ նա մի թեթեւ ձայն հանեց և ապա սկսեց ծիծաղել։ Անշուշտ այդտեղ անակնկալ երեւոյթն էր հաճոյքի գլխաւոր պատճառը, ճիշտ այնպէս, ինչպէս որ անակնկալ և սրամիտ արտայայտութիւնները հաճոյք են պատճառում չափահաս մարդկանց։ Ես մտաբերում եմ, որ երեք թէ չորս շաբաթ առաջ, նախ քան այն ժամանակը, երբ նա սկսել էր այդպէս զւարճանալ, դէմքի յանկարծակի բացումը, քթի ու թշերի թեթեւ կշմտոցն էլ էր զւարճալի թւել նրան։ Ես սկզբում զարմացել էի, որ երեք ամսից մի քիչ մեծ մանուկն արդէն հասկանում էր հանաքը. սակայն եթէ ի նկատի ունենանք, թէ

ինչպէս վաղ են սկսում խաղալ շան և կատուի ձագերը, այն ժամանակ մենք զարմանալու կարիք չենք զգալ: Չորս ամսականում պարզ նկատելի էր, որ նա բաւականութիւն է զգում՝ լսելով դաշնամուրի ձայնը. անշուշտ դա գեղազիտական զգացմունքի առաջին նշանն էր, եթէ միայն երփներանգ գոյներով հրապուրւելը, որ աւելի վաղ էր կատարւել, ուշադրութեան չառնենք այդ տեսակէտից:

Դէպի մարդիկ ունեցած կապը մանկան մէջ երեւան եկաւ շատ վաղ. նա սկսեց ժպտալ այն մարդկանց ներկայութեամբ, որոնք նրան զբաղեցնում էին. իր ծանօթների մօտ մանուկը ժպտում էր դեռ երկու ամսական չ'եղած ժամանակ, թէպէտ ես չեմ կարող անսլայման հաստատել, թէ նա ճանաչում էր որ և է մէկին չորս ամսական դառնալուց առաջ: Հինգ ամսականում նա արդէն ցոյց էր տալիս հակում կամ տրամադրութիւն դէպի իւր դայեակը, բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ կապը չ'արտայատւեց գիտակցաբ. մի տարեկանից մեծ էր նա, երբ սկսեց յաճախակի համբուրել դայեակին՝ երկար ժամանակ նրան չտեսնելուց յետոյ: Կարեկցութեան զգացմունքն երեւան եկաւ վեց ամսականում. երբ դայեակն իրեն լացող ձևացրեց, երեխան կարեկցութիւն արտայայտեց նրան՝ իւր դէմքի մռայլութեամբ և բերանը կուչ ածելով: Երբ ես փաղաք-

չեցի ու շօյեցի նրա մեծ տիկնիկին և օրօրեցի նրա փոքրիկ քրոջը, այն ժամանակ պարզ կերպով արտայայտեց նախանձի զգացում. այդ պատահեց 15½ ամսականում: Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ շների նախանձի զգացումը շուտ է զարգանում, պէտքէ ենթադրել, որ երեխաների մէջ լիշաժ ժամանակից էլ աւելի վաղ է երեւան գալիս այդ, եթէ միայն ստոյգ դիտողութիւններ կատարենք:

Գործնական նշանակութիւն ունեցող առաջին շարժողութիւնը, որ կատարեց իմ մանուկը, այդ այն էր, որ նա աշխատեց մատիս ծայրը տանել իր բերանը. այդ պատահեց 114-րդ օրը. Չորս ու կէս ամսականում նա արդէն ժպտում էր՝ իմ կամ իւր դէմքը հայելու մէջ տեսնելով, որոնց նա երբեմն իսկականի տեղ էր ընդունում. այդ ժամանակներում նա արդէն հասկացողութիւն ունէր, քանի որ ականյալտնի կերպով զարմանում էր՝ լսելով իր յետեւից իմ ձայնը:

Ինչպէս առհասարակ բոլոր երեխաները, այնպէս և նա, մեծ հաճութեամբ էր դիտում իրեն հայելու մէջ. երկու ամսականից դեռ փոքր էր, երբ հասկացաւ որ պատկեր է տեսնում. այդ նրանից երեւաց, որ երբ ես տարօրինակ արտայայտութիւն էի տալիս դէմքիս, կանգնած նրա կողքին, նա հայելու մէջ տեսնելով դէմքիս փոփոխութիւնները՝ երեսը շրջում էր և ինձ նայում:

Մի անգամ, երբ նա եօթ ամսական էր և գլուխը
նրբում էր բակում, տեսնելով ինչ սենեակում
կանգնած, պատուհանի մօտ, մեծ հայելու չափ
ապակու լետեում, ակնյայտի կերպով տարակու-
սանքի մէջ ընկաւ՝ հաստատ չիմանալով արդեօք
պատկերս է տեսնում թէ իսկական կերպարանքս:
Իմ փոքրիկ աղջիկն այդքան հասկացողութիւն
բնաւ ցոյց չի տւել և կատարելապէս շփոթւել է՝
տեսնելով հայելու մէջ իր լետեում կանգնողի
պատկերը: Կապիկների զարգացած տեսակները,
որոնց ես փորձել եմ փոքրիկ հայելիով, ուրիշ
կերպ են վարւում. նրանք մօտենում են հայե-
լուն և այդպիսով ցոյց տալիս իրանց հասկացո-
ղութիւնը, բայց տեսնելով հայելու մէջ իրանց
կերպարանքը՝ ոչ մի բաւականութիւն չեն ստա-
նում, այլ ընդհակառակը բարկանում են և այլ
ևս չեն կամենում նայել:

Հինգ ամսականից սկսած մանկան զաղա-
փարները կապակցութիւնները կազմակերպւում
էին և ամրապնդւում նրա մտքերի մէջ:
Այսպէս օրինակ նա շատ բարկացաւ, երբ նրան
հագցրին գլխարկ ու վերարկու և իսկոյն չը
տարան զբօսանքի: Եօթ ամսականում նա մեծ
յառաջադիմութիւններ էր անում, ինչպէս օրի-
նակ՝ դայեակին ճանաչում էր անունով. երբ ես
ծծմօր անունն էի տալիս, երեխաս նրան էր նայ-
ում: Միւս երեխաս սիրում էր գլուխը դէպի

կողմը թեքել. յաճախ նրանից օրինակ վերցնելով,
ասում էինք՝ «հապա մի գլուխդ օրօրիր». եօթ
ամսականում նա կատարում էր այդ մի խօսքով,
երբ նոյն իսկ շարժողութեան նշան չէինք տալիս:
Վերոյիշեալ առաջին մանուկս հետեւեալ չորս ամս-
ւայ ընթացքում սովորեց բառերով դիտակցել շատ
առարկաներ և դորժողութիւններ. օրինակ՝ երբ
նրան խնդրում էին համբուրել, նա շրթունքներն
երկարացնում էր և այդ դրութեան մէջ մնում.
կամ թէ նա գլուխն օրօրում էր և զայրացած
«ախ» բացականչում, երբ տեսնում էր ածխի ար-
կըրը կամ թափած ջուր, որովհետեւ նրան սովո-
րեցրել էին, թէ դա անմաքրութեան նշան է:
Ինչը ամսականից մի քանի օր պակաս՝ նա արդէն
կարողանում էր իր սեփական անունը կապել հայե-
լու մէջ տեսած իւր պատկերի հետ: Երբ անունը
տալիս էինք, այդ ժամանակ նա դառնում էր դէ-
պի հայելին՝ մինչև անգամ եթէ բաւական հեռու
էր գտնւում նրանից: Ինչ ամսից մի քանի օրով
էր մեծ, երբ նա անակնկալ կերպով հասկացաւ,
որ առջևի պատի վրայ ստւեր ձգող առարկան պիտի
փնտրել լետեում: Երբ մի տարեկան էր, բաւական
էր նրա մօտ ընդմիջումներով կրկնել երկու կամ
երեք անգամ ո՞ր և է կարճ նախադասութիւն, որ-
պէսզի նրա մտքում առաջանար զաղափարների
կապակցութիւն. իսկ դա Տէնի նկարագրած մա-
նուկն աւելի ուշ է երեւան հանել. թէպէտ այն
էլ պիտի նկատի ունենալ, որ առաջին անգամ

79.86909

БИБЛИОТЕКА
ИИ СТИТУТА
ИСТОРИКО-ЕДЕННИ
Академии Наук
СССР

յայտնելը կարող էր աչքի չընկնել: Իմ կարծիքով փոքրիկ մանկան և տեսածս չափահաս ու ամենախելացի շան մտաւոր ընդունակութիւնների միջև եղած ամենազարմանալի տարբերութիւնը հենց դադափարներն այդպէս հեշտութեամբ կապակցելու և իւրացնելու մէջն է: Ինչ տարբերութիւն կայ մանկան և այն խելափարի (ձուկ) հասկացողութեան միջև, որի վրայ դիտողութիւններ է կատարել պրոֆեսսոր Մերիւսը: Այդ ձուկն երեք ամիս շարունակ դըւած էր ակվարիումի մէջ. նա անդադար խփում էր այն ապակեայ պատին, որ նրան բաժանում էր մի քանի սպիտակաձկներից (уклейка). խելափարը հասկանալով, որ չի կարող նրանց յափշտակել, վճռականապէս հրաժարւեց այնուհետև նրանց վրայ յարձակելու մտադրութիւնից. այնտեղը հասաւ, որ նոյն իսկ, երբ խելափարին դրին սպիտակ ձկների հետ միասին մի ընդհանուր ակվարիումի մէջ՝ նա դարձեալ չէր յարձակուում նրանց վրայ:

Ինչպէս Տէնն է նկատում, երեխաները շատ վաղ են սկսում հետաքրքրութիւն ցոյց տալ, որ իհարկէ մեծ նշանակութիւն ունի նրանց հասկացողութեան զարգացման համար. բայց ես այդ երևոյթի նկատմամբ յատուկ դիտողութիւններ չեմ կատարել:

Անգործութեան չէր մատնւած և նմանելու ձիրքը: Երբ մեր մանուկը տակաւին չորս ամսա-

կան էր, ինձ այնպէս էր թւում, թէ նա կարծես աշխատում էր օրինակ վերցնել ձայնի հնչիւններից. բայց կարող է պատահել, որ սխալւած լինեմ, որովհետև այդ բանի մէջ ես հաստատապէս համոզւել եմ միայն այն ժամանակ, երբ նա կարողանում էր հեշտութեամբ ընդօրինակել ամեն տեսակի շարժւածքներ, ինչպէս օրինակ գլուխն օրօրելը,...

Երբ նրան պատմեցին կաշաղակի մասին, այն ժամանակ նա սկսեց ցուցամատով խփել միւս ձեռքի ափին. այդպիսով նա յիշեցնում էր կաշաղակի կտցահարելը: Զւարճալի էր տեսնել, թէ ինչպէս էր նա ուրախանում, երբ նրան յաջողում էր կատարել զանազան շարժողութիւններ: Զգիտեմ, իբրև ապացոյց փոքրիկ մանկան յիշողութեան ոյժի՝ արժէ յիշատակել այն փաստը, որ մեր մանուկը 3 տարեկան և 23 օրական հասակում իսկոյն և եթ ճանաչեց նկարի վրայ իր պապին, որին նա չէր տեսել ամբողջ վեց ամսւայ ընթացքում. բացի դրանից երեխաս պատմեց մի շարք դէպքեր, որոնք կատարւել էին այն ժամանակ, երբ պապը մեզ մօտ էր եղել. չպէտք է մոռանալ և այն, որ այդ դէպքերի մասին մեր շրջանում վերջերքը խօսելու առիթ չէր պատահել:

Բարոյական զգացմունքի առաջին նշանն երեխայիս մէջ առաջացել է համարեա թէ 13 ամսականում. երբ ես ասացի՝ «Դժգոյի, չէս ուզում

Համբուրել խեղճ Հայրիկիդ, չար Դօդդի» — այդ խօսքերը, ինչպէս երեւաց, նրան տհաճութիւն պատճառեցին. իսկ երբ ես նրա մօտից հեռացայ, նա շրթունքները երկարացրեց, որով ցոյց տւեց ինձ Համբուրելու պատրաստակամութիւնը. նա դժգոհութեամբ ցնցում էր իր պստիկ ձեռքը, մինչև որ ես մօտեցայ և Համբուրեցի նրան: Կրկին նման մի դէպք պատահեց մի քանի օր դրանից յետոյ. դժգոհութիւնից յետոյ կայացած հաշտութիւնը, ինչպէս երեւում էր, նրան մեծ բաւականութիւն էր պատճառում նոյն իսկ այն աստիճան, որ յետագայում նա մի քանի անգամ դիտմամբ այնպիսի արտայայտութիւն էր տալիս իր դէմքին, որ իբր թէ բարկացած է: Նա խփում էր ինձ և իսկոյն և եթ շուռ գալիս դէպի ինձ՝ Համբուրելու համար: Արդեօք դա դրամատիկական արեւստի նշան չէ, որ փոքրիկ երեխաները մեծ մասամբ ոգևորութեամբ են արտայայտում: Հենց այդ ժամանակներում շատ հեշտ էր ազդել նրա զգացմունքի վրայ և հարկադրել նրան՝ անելու մեր ցանկացածը: Երկու տարեկան և երեք ամսական ժամանակ նա փոքրիկ քրոջը տւեց իր բաժին քաղցր բաղարջի (ПРЯНИКЪ) վերջին կտորը և ինքնագոհութեամբ բացականչեց՝ «ճ, բարի Դօդդի, բարի Դօդդի»:

Այդ դէպքից երկու ամիս անցած՝ նա դարձել էր շատ զգայուն դէպի ծաղրը և այնքան կաս-

կածամիտ էր, որ յաճախ, երբ մարդիկ իրար հետ զրուցում էին և ծիծաղում, նա կարծում էր թէ իրեն ծաղրում են: Յետագայում, երբ նա երկու տարեկան և եօթ ու կէս ամսական էր, ես մի անգամ նկատեցի, որ նա սեղանատնից դուրս եկաւ. այդ ժամանակ նրա աչքերը փայլում էին արտասովոր կերպով և նա մի տարօրինակ հոգեկան տրամադրութեան մէջ էր: Ես ներս մտայ սենեակը, որպէսզի իմանամ թէ ինչ է պատահել այնտեղ. և իսկապէս շուտով նկատեցի, որ նա բերանը քաղցրացրել է շաքարաւազով, իսկ այդ մանկանն երբէք և ոչ մի կերպով չէինք պատժել, ապա ուրեմն նրա տարօրինակ հոգեկան դրութիւնը պէտք է բացատրել ոչ թէ վախի զգացումով, այլ նրա և իւր խղճի միջև տեղի ունեցող կռիւից առաջացած ներքին յուզմունքով:

Այդ դէպքից երկու շաբաթ յետոյ ես կրկին հանդիպեցի նրան, երբ դուրս էր գալիս նոյն սեղանատնից. այդ ընդմէջն նա ուշի — ուշով գննում էր իր խնամքով փաթաթած գոգնոցը և այնքան տարօրինակ վարմունք էր ցոյց տալիս, որ ես կամեցայ տեսնել, թէ ինչ կայ նրա գոգնոցում, թէ պէտ նա պնդում էր, թէ ոչինչ չկայ և կրկնում էր՝ «Հեռու կաց ինձնից»: Երբ նայեցի, տեսայ որ գոգնոցը թաթախած է քաղցրաւենիքի հիւթով. պարզ էր, որ երեխաս ինձ խաբում էր դիտաւորեալ կերպով:

Մենք նրան առհասարակ ոչ մի պատժի չէինք ենթարկում, այլ աշխատում էինք ուղղել, ազդելով նրա բարի զգացմունքի վրայ: Չնորհիւ այդպիսի դաստիարակութեան՝ նա շուտով դարձաւ ճշմարտասէր, պարզամիտ և քնքոյշ երեխայ:

Ով երբ և իցէ դիտել է փոքրիկ երեխաներին, նա նկատած կըլինի, թէ նրանք որքան ուշադրութեամբ են նայում իրենց անձանթ մարդու երեսին: Հափաճաւ մարդն այդպէս նայում է միայն գազանին կամ անասնոցի առարկային: Իմ կարծիքով այդ նրանից է առաջ գալիս, որ երեխաներն այնքան էլ վախկոտ չեն, որքան մենք ենք ենթադրում, թէպէտ նրանք երբեմն վախեցնում են անձանթ և տարօրինակ մարդկանցից:

Երկիւղի առաջին նշանն իմ մանկան մէջ ես նկատել եմ այն ժամանակ, երբ նա մօտաւորապէս երկու և մի քառորդ տարեկան էր. վախը գլխաւորապէս նրանով արտայայտւեց, որ նրա աչքերը խուսափեցին իմ հայեացքից. բայց շուտով անցաւ վախի այդ արտայայտութիւնը. նա եկաւ նստեց ծնկներէս վրայ և ինձ համբուրեց: Մանուկն իր ուզածն ուրիշներին հաղորդում է գլխաւորապէս լացով կամ աւելի ճիշտն ասած ճշոցով, որովհետեւ նա տակաւին այդ ժամանակ արտասուք չի թափում. այդ միջոցն իհարկէ բնազդական է, բայց ծառայում է և վիշտ արտայայտելու համար: Որոշ ժամանակ անցնելուց յետոյ՝ լացի ձայնը

տարբեր բնոյթ էր կրում. լաց լինելու եղանակը ցոյց էր տալիս արդէն՝ արդեօք երեխան քաղց է զգում, թէ՛ ցաւ: Այդ պարզ նկատելի էր այն ժամանակ, երբ երեխաս տասը և մէկ ամսական էր. միւս մանուկս աւելի վաղ ցոյց տւեց արտայայտութեան այդ եղանակը:

Նա շուտով սկսեց գիտակցաբար լաց լինել. դէմքին մի առանձին արտայայտութիւն տալով նա ուզում էր ասել, որ ինքն մի ինչ-որ բանի կարիք ունի: Քառասուն և վեց օրականում նա մեղմ ձայներ էր հանում առանց որ և է իմաստի, միայն իր սեփական հաճոյքի համար. բայց այդ հնչիւնները շուտով որոշ կազմակերպութիւն ստացան: Ծիծաղի սկիզբը դրւեց 113-րդ օրը. միւս երեխաս աւելի վաղ սկսեց ծիծաղել: Ինչպէս արդէն ասել եմ, այն ժամանակ ինձ թւում էր թէ երեխաս սկսում է հնչիւններ ընդօրինակել, որ կատարւեց յետագայում: Հինգ ու կէս ամսականում նա արտասանեց բաժանական «հը-աւ» հնչիւնը, բայց առանց նշանակութեան: Մի տարեկանից քիչ մեծ էր, երբ նա իր ցանկութիւնները յայտնելու համար սկսեց գործ ածել ձեռքի շարժումներ: Օրինակ մի անգամ նա վերցրեց մի թղթի կտոր և տալով ինձ՝ մատնացոյց արեց կրակը, որովհետեւ նա շատ անգամ էր տեսել, թէ ինչպէս է թուղթն այրւում կրակի մէջ և անշուշտ դա նրան զւարճութիւն էր պատճառել: Ուղիղ մի տա-

րեկանում նա մեծ յառաջադիմութիւն արեց՝ կերակրի համար առանձին մի արտայայտութիւն գործածելով, որ է *մում*։ (իսկ հայ մանուկը նոյն բառը մի քիչ փոփոխում է, ասելով *մամա*)։ Թէ նա ինչպէս հասաւ յառաջադիմութեան այդ կէտին, ես չկարողացայ իմանալ։ Այդ օրւանից սկսած նա իր քաղցը այլ ևս լացով չէր արտայայտում, այլ *մում*՝ արտասանելով մատնացոյց էր անում ուտելիքը, այդպիսով պարզօրէն յայտնում էր, որ ուտել է ուզում։ *Մում*-ը համապատասխանում է Տէնի դիտողութեան ենթարկած մանկան *ամ* բառին, որ նա գործ էր անել աւելի ուշ, 14-րդ ամսականում։ Բայց իմ երեխաս *մում*՝ բառը գործադրում էր աւելի լայն հասկացողութիւն ունեցող գոյականի մըտքով. օրինակ շաքարին շու — *մում* էր ասում, իսկ յետագայում մատուտակին (քաղցը բիանի) *ըլակ — շու — մում*, այսինքն սև շաքար։

Ինչ առանձնապէս զարմացրեց այն հանգամանքը, որ երբ նա *մում*՝ բառը գործ էր անում կերակուր պահանջելու մտքով, այն ժամանակ խօսքի վերջում որոշ հարցական տոն էր դնում. այդպէս էր արտասանում և *ա/ս* բառը, որը մեծ մասամբ նա գործադրում էր այն դէպքում, երբ մէկին ճանաչում էր կամ թէ իր պատկերն էր տեսնում հայելու մէջ, մի և նոյն ժամանակ նա այնպիսի արտայայտութիւն էր ընդունում, որ

կարծես թէ վախեցած լինի։ Ըստ երևոյթին այդ շեշտերի գործածութիւնը տեղի էր ունենում կատարելապէս բնագոյօրէն, բայց և այնպէս շատ եմ ավստոսում, որ այլ ևս դիտողութիւններ չեմ կատարել այդ առթիւ։

Իմ դիտողութեան համաձայն, 18-րդ և 21-րդ ամիսների ընթանցքում երեխաս վճռականապէս հրաժարւում էր կատարել այն, ինչ որ չէր կամենում ինքը. բացի դրանից նա կարողանում էր իր ձայնին տալ որոշ, լալկան—կանչող բնոյթ և իր հաւանութիւնը յայտնում էր «*ըլս*» բառով։

Տէնը մեծ նշանակութիւն է տալիս այն պարզ հնչիւններին, որ նրա մանուկն արտասանում էր նախ քան խօսել սկսելը։ Հարցական տոնը, որ իմ մանուկը դնում էր *մում*՝ բառի վերջում. երբ ուտել էր կամենում, առանձնապէս ուշադրաւ է. թող որ և մէկն այդպէս գործ անէ մի առանձին բառ կամ թէ մի կարճ նախադասութիւն, այն ժամանակ կը նկատէ, որ իր ձայնի տոնը վերջում բաւական բարձրացրել է։ Ես յետոյ յիշեցի, որ այդ փաստը հաստատում է մի ուրիշ տեղ յայտնած իմ կարծիքը, թէ մարդիկ նախ քան բաժանական լեզւին տիրապետելը, գործ էին անում իսկապէս երաժշտական գամմայի ձայները, ինչպէս այդ անում է մարդակերպ գելլօթատ կապիկը։

Մանուկը իւր ցանկութիւնները նախ արտայայտում է նշաններով և ձայներով, ապա դրանք

ձևակերպուում են մասամբ ինքնաբերաբար, իսկ մասամբ էլ գիտակցաբար, դառնալով արտայայտութեան միջոցներ. վերջիններիս շարքը պիտի դասել և դիմագծերի ինքնաբերաբար կատարուող արտայայտութիւնները, ինչպէս և զանազանակերպ շեշտերը և վերջապէս նոր հնարած սեփական բառերը, որոնք արդէն ամփոփ միտք են պարունակում իրենց մէջ. այդ բոլորի վրայ իբրեւ թագ ու պսակ աւելանում են պատրաստի խօսքերը, որոնք լսածի ընդօրինակութիւնն են կազմում և իւրացնում են զարմանալի արագութեամբ: Կարծում եմ, որ մանուկը վաղ հասակից ի վեր սկսում է որոշ չափով հասկանալ իրեն խնամող մարդկանց զգացմունքներն ու մտքերը. այդ նա իմանում է մեծ մասամբ դէմքերի արտայայտութիւններից: Որ մանուկը կարողանում է ծիծաղ արտայայտել, դրանում կասկած չը կայ. իսկ այն մանուկը, որի կենսագրութիւնը յառաջբերի այստեղ, կարեկցութեան զգացմունք արտայայտեց այն ժամանակ, երբ հինգ ամսականից մի քիչ մեծ էր: Մօտաւորապէս մի տարեկանում նա անկասկած դիտողութեան էր առնում իրեն շրջապատողների դէմքերի արտայայտութիւնները: Երբ երեխաս կարողանում էր ցոյց տալ մի որ և իցէ նոր ընդունակութիւն, այն ժամանակ նայում էր իրեն շրջապատող մարդկանց. անշուշտ մի քանիսի դէմքերը նրան աւելի էին դուր գալիս, քան միւս-

ներինը. այդ երևոյթն առաջանում է դէմքերի արտայայտութեանց տարբերութիւնից:

Մի տարեկանից փոքր էր, բայց արդէն հասկանում էր շեշտերը և շարժմունքները, ինչպէս և տարբեր բառերն ու կարճ նախադասութիւնները: Մի բառ, որ իր դայակի անունն էր ցոյց տալիս, նա հասկացաւ ուղիղ հինգ ամիս առաջ, նախ քան միւս արտասանելը. բայց այդ այնքան էլ զարմանալի չէ, քանի որ ստորին կարգի կենդանիները շատ հեշտութեամբ են սովորում հասկանալ այլ և այլ բառեր:



Библиотека
Института
Зоотехнических
Наук
СССР

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСОВЕЩЕНИЯ
Академии Наук
СССР

This image shows a blank, aged, light brown page, likely an endpaper or flyleaf of a book. The paper has a textured, slightly mottled appearance with visible creases and some minor discoloration or foxing. A small, irregular tear or hole is present near the bottom left corner. The overall color is a warm, light brown or tan.

807

9511

БИБЛИОТЕКА
АКАДЕМИИ
НАУК
СССР

ՀՀ Ազգային գրադարան

NL0150210

